ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՄԵԿՆԵԼՈՒ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Մկրտչյան Ա. Ա. (ԵՊՀ, Երևան, ՀՀ)

anushmkrtchyan@ysu.am

Հոդվածում ներկայացված է սուբյեկտիվ բարեկեցության առանձին բաղադրիչների դերի և երիտասարդների Հայաստանից մեկնելու մտադրությունների ուսումնասիրություն, մասնավորապես բարեկեցության հուզական, սոցիալական և հոգեբանական բաղադրիչների առանձնահատկությունների վերլուծություն երևանաբնակ երիտասարդների Հայաստանից մեկնելու մտադրությունների օրինակով: Սուբյեկտիվ բարեկեցության բազմակողմանի ուսումնասիրությունները թույլ են տալիս հասկանալ անձի վարքային դրսևորումների հիմքում ընկած դրդապատճառները: Հետազոտության արդյունքները վկայում են այն մասին, որ Հայաստանից մեկնելու մտադրություն ունեցող երիտասարդների մոտ առկա է սոցիալական բարեկեցության ավելի ցածր աստիճան (սոցիալական ինտեգրացիա, ընդունում և սոցիալական իրացում) քան նրանց մոտ, ովքեր չունեն նման մտադրություն: Հետազոտության արդյունքները հիմք են հանդիսանում հիմնախնդրի կանխման նպատակով ռազմավարությունների մշակման համար:

Հանգուցային բառեր՝ *սուբյեկտիվ, հոգեբանական, սոցիալական բարեկեցություն, էվդեմոնիա, Հայաստան, մեկնել, մտադրություն:*

Վերջին տասնամյակում սուբյեկտիվ բարեկեցության հիմնախնդիրը ավելի հաճախ է հայտնվում հոգեբանների ուսումնասիրությունների տեսադաշտում: Դա պայմանավորված է նրանով, որ հոգեբանական գիտության ու պրակտիկայի համար անհրաժեշտ է հասկանալ, մարդու ներքին հարմարավետությունն ու հավասարակշռությունը պատճառավորող հոգեբանական առանձնահատկությունները, վերջիններիս հիմքում ընկած հուզական ու գնահատողական բաղադրիչները և դրանց ազդեցությունը անձի վարքի վրա: Սուբյեկտիվ բարեկեցության ուսումնասիրությունն անհրաժեշտ է անձի ինքնաիրացման ճանապարհներն ու ձևերը, ժամանակակից մարդու ներուժը բացահայտելու, իրականության վերաբերյալ կառուցողական վերաբերմունք ձևավորելու համար:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ներկա ժամանակաշրջանում անձը բախվում է մի շարք բարդ և հակասական գործընթացների, որոնք իրենց ազդեցությունն են ունենում սուբյեկտիվ բարեկեցության առանձին բաղադրիչների վրա: Վերջին շրջանի հետազոտությունները փաստում են, որ հայ հասարակության առջև ծառացած հիմնա-

խնդիրներից է արտագաղթը: Չնայած նրան, որ կան արտագաղթի դրդապատճառները դուրս բերող բազմաթիվ քաղաքական, տնտեսական և սոցիալական հետազոտություններ, այնուամենայնիվ հոգեբանական հետազոտությունները կարևոր են հիմնախնդրի բազմակողմանի ուսումնասիրման և վերլուծության համար:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել սուբյեկտիվ բարեկեցության առանձնահատկությունները երիտասարդների Հայաստանից մեկնելու մտադրություններում:

Հնագույն ժամանակներից սկսած մարդկանց հետաքրքրել է, թե ինչն է նպաստում «լավ կյանք»-ին: Գիտնականները, ովքեր ուսումնասիրում էին սուբյեկտիվ բարեկեցությունը, ենթադրում էին, որ լավ կյանքի հիմնական բաղադրիչը անհատի սերն է իր կյանքի հանդեպ: Սուբյեկտիվ բարեկեցությունը բնորոշվում է որպես անհատի՝ սեփական կյանքին ուղղված կոգնիտիվ և աֆֆեկտիվ հայացք: Այդ գնահատումը ներառում է ինչպես հուզական արձագանքը իրադարձություններին, այնպես էլ կյանքի բավարարվածության ու լիարժեքության կոգնիտիվ գնահատում [3, 34]:

Բարեկեցությունը ներկայացվում է որպես բազմագործոն համակարգ, որը բնորոշվում է որպես սոցիալական, մշակութային, տնտեսական, հոգեբանական, ֆիզիկական ու հոգեկան գործոնների փոխկապակցվածություն [2, 157-159]:

Սուբյեկտիվ բարեկեցության ֆենոմենը կապված է ոչ միայն պահանջմունքների ու դրանց իրացման, այլև դրանց բավարարման հավանականության, կյանքի ու հենց իր հանդեպ ունեցած անհատի սուբյեկտիվ վերաբերմունքի հետ:

Անհատը պետք է հավասարակշռի սեփական պահանջմունքների բավարարումը հասարակության պահանջմունքների հետ, պետք է պահպանի գործելու ներքին մեխանիզմների ու արտաքին պայմանների միջև եղած հավասարակշռությունը: Մի կողմից կարելի է տեսնել մարդու ներգրավվածության կարևորությունը սոցիումի կյանքում, կոմպետենտությունն ու ուղղվածությունը սոցիալական նորմերին, իսկ մյուս կողմից՝ սեփական հետաքրքրություններին ու անհատական աճին: Այս ձևով ձևավորվում է սոցիումում հարմարման ու ինքնիրացման միջև հավասարակշռությունը: Հենց այս հավասարակշռությունից է կախված, թե արդյոք մարդն իրեն զգում է բարեկեցիկ, թե ոչ [1, 141-146]:

Անհատի բարեկեցությունը սուբյեկտիվ բնորոշում է՝ կիրառելի միայն կոնկրետ մարդու համար: «Սուբյեկտիվ բարեկեցություն» հասկացությունը արտացոլում է մարդու ներքին աշխարհն ու ենթադրում է սոցիալական կարգավորումների առկայություն, որոնց իրացումը որոշվում է սոցիալականացման պայմանների օգնությամբ:

Սուբյեկտիվ բարեկեցության հոգեբանական կողմը՝ *էվդեմոնիան,* լրացում է կյանքի գնահատմանն ու աֆֆեկտին, որտեղ հիմնական ուշադրությունը կենտրոնացվում է փորձի վրա: Հոգեբանական բարեկեցությունը դուրս է գալիս կոգնիտիվ ու աֆեկտիվ ենթահամակարգերի սահմաններից՝ կենտրոնանալով մարդու ամբողջական ներուժի գործառնության ու իրագործման վրա: Հյուպերտը /Huppert/ սուբյեկտիվ բարեկեցության «ֆունկցիոնավորող» էլեմենտը բնորոշում է որպես նպատակասլացություն, նպատակի զգացողություն, համառություն, սոցիալական ակտիվություն, ալտրուիզմ ու հոգատարություն: Հոգեբանական բարեկեցությունն իր մեջ ներառում է մարդկանց ընկալման ասպեկտները սեփական բարեկեցության մասին, որոնք ընդգրկված չեն ո՛չ կոգնիտիվ, ո՛չ էլ աֆֆեկտիվ ենթահամակարգերում [6, 163-165]:

Սուբյեկտիվ բարեկեցության եռաբաղադրիչ մոդելում առանձնացնում են կյանքով բավարարվածության, հուզական և էվդեմոնիկ կամ հոգեբանական բաղադրիչները [4, 305]:

Հյուպերտը (Huppert) ուսումնասիրել է հոգեբանական բարեկեցությունը նկատի ունենալով որպես «լավ» հոգեկան վիճակ՝ ներառած այն բոլոր գնահատումները /դրական և բացասական/, որոնք մարդիկ տալիս են իրենց կյանքն [5, 108-115]:

Սուբյեկտիվության խնդրի ավելի ամբողջական հասկացման համար անհրաժեշտ է ուսումնասիրել հոգեբանական բարեկեցության բազմաչափ մոդելները, որոնց կառուցման համար բանալի են հանդիսանում ամերիկացի հոգեբաններ Դիների (Diener), Բրեդբերնի (Brudburn) և Ռիֆի (Ryff) տեսական կոնցեպցիաները: Մեր իսկ հետազոտության մեթոդաբանությունը կառուցվել է Ռիֆի կողմից առաջարկված մոդելի վրա: Ռիֆի մոդելում առանձնացվում են բարեկեցության վեց հիմնական գործոններ:

Ինքնաընդունում. մարդն ունի դրական վերաբերմունք սեփական անձի և իր անցյալի նկատմամբ:

Դրական հարաբերություններ շրջապատողների հետ. մարդը հաճույք է ստանում այլ մարդկանց հետ ունեցած հարաբերություններից, այլ մարդկանց հանդեպ տարած խնամքից, կապվածությունից ու մտերմությունից:

Ավտոնոմիա. մարդ, ով օժտված է բարձր ավտոնոմիայով, գնահատում է իրեն՝ ելնելով սեփական չափանիշներից, եթե ավտոնոմիան բացակայում է, մարդը մտահոգվում է այլ մարդկանց գնահատականներով ու սպասումներով: Կարևոր որոշումներ կայացնելիս հենվում է ուրիշների դատողությունների վրա, նրա մտածողությունն ու վարքը ենթարկվում է սոցիալական ճնշմանը:

Կոմպետենտություն. մարդն օժտված է վարպետության ու կոմպետենտության զգացումով իր շրջապատում:

Նպատակ. մարդն ունի ուղղվածության զգացում ու կոնկրետ նպատակներ, որոնք դնում է իր առջև կյանքի ընթացքում:

Անձնային աճ. մարդն ունի անձնային շարունակական աճի ու սեփական ներուժի իրացման զգացում [8]:

Հոգեբանական բարեկեցության չափման համար կիրառվել է «Մտավոր առողջության կոնտինուում» հարցարանը (Mental Helath Continuum - Short Form): Այս հարցարանն ուղղված է չափելու հոգեբանական բարեկեցության երեք բաղադրիչները՝ հուզական, սոցիալական և էվդեմոնիկ: Այն կազմված է 14 հարցերից: Հարցարանն իր մեջ ներառում է Ռիֆի (Ryff, 1989) հոգեբանական բարեկեցության վեց չափումներն ու Քեյսի (Keyes, 1998) սոցիալական բարեկեցության մոդելի հինգ չափումները: Հուզական բարեկեցության համար նախատեսված հարցերը միասին կոչվում են հեդոնիկ (Hedonic): Սոցիալական բարեկեցությանը վերաբերող հարցերը կոչվում են սոցիալական բարեկեցության սանդղակ: Հոգեբանական բարեկեցության չափման համար նախատեսված հարցերը միասին կոչվում են էվդեմոնիկ [7, 100-106]: Հարցարանն ադապտացվել է ԵՊՀ «Անձ և սոցիալական միջավայր» գիտահետազոտական լաբորատորիայի կողմից: Հետազոտության ընտրանք են կազմում 206, 18-35 տարեկան երիտասարդներ:

Ստորև կանդրադառնանք հոգեբանական բարեկեցության միջին ցուցանիշների խմբային համեմատությանը:

Աղյուսակ 1. Հոգեբանական բարեկեցության և երիտասարդների Հայաստանից մեկնելու մտադրությունների միջին ցուցանիշների համեմատություն.

	Մեկնելու մտադրություն	N	Միջին	Ստ. Շեղում	Ստ.միջին
Հուզական բարեկեցություն	Այո	94	4.0869	1.15411	.11904
	Ոչ	112	4.3690	1.03358	.09766
Սոցիալական բարեկեցություն	Այո	94	2.8085	.99457	.10258
	Ոչ	112	3.2054	.92371	.08767
Հոգեբանական բարեկեցություն	Այո	94	4.4654	1.01013	.10419
	Ոչ	112	4.4685	.99395	.09392

Արդյունքներից երևում է, որ բաշխվածության ամենաբարձր ցուցանիշն ունի հոգեբանական բարեկեցությունը, որին հաջորդում է էմոցիոնալ բարեկեցությունը, այնուհետև սոցիալական բարեկեցությունը: Էմոցիոնալ բարեկեցությունը ենթադրում է կյանքում դրական հույզերի առկայությունն կամ ընդհակառակը: Երկու խմբերի միջին ցուցանիշների համեմատությունը փաստում է հուզական բարեկեցության խմբային տարբերությունների աննշան լինելու մասին: Այնուամենայնիվ, այն երիտասարդները, ովքեր չունեն Հայաստանից մեկնելու մտադրություն, նրանց մոտ դրական հույզերի առկայությունը առավել դոմինանտ է: Ի տարբերություն սուբյեկտիվ բարեկեցության հեդոնիկ բաղադրիչի բարեկեցության էվդեմոնիկ /eudaimonic/ բաղադրիչը մեկնաբանում

է բարեկեցությունը միայն հոգեբանական տեսանկյունից վերջինիս կապելով ինքնաիրացումը որպես դոմինանտ իմաստի, սեփական ներուժի, ռեսուրսների ամբողջական դրսևորում: Էվդեմոնիկ հեռանկարի տեսանկյունից առանձին անհատի մակարդակում դրսևորվող բարեկեցությունը կոնտեքստային է. բարեկեցությունը հաճույքի հոմանիշը չէ, այլ այն կապված է անհատի և հասարակության համար կարևոր նպատակների հետապնդման կարողության հետ, ռեսուրսների մոբիլիզացման հետ, անհատական կարողությունների, ավտոնոմիայի և սոցիալական կոմպետենտության հետ և միջանձնային հարաբերությունների դերը անհատների և համայնքի խրախուսման մեջ: Հոգեբանական բարեկեցության բաղադրիչի վերլուծությունը ցույց է տալիս, որ խմբային տարբերություններ չկան, ինչը վկայում է այն մասին, որ երկու խմբերի մոտ էլ հավասարաչափ առկա են սերտ փոխհարաբերություններ մարդկանց հետ, կյանքում նպատակների առաջ քաշում, անձնային բավարարվածության և աճի հնարավորության առկայություն: Ամենաբարձր ցուցանիշները հոգեբանական բարեկեցության միջակայքում են: Ակնհայտ խմբային տարբերություններ դրսևորվում են սոցիալական բարեկեցության սանդղակում: Հայաստանից մեկնելու մտադրություն ունեցող երիտասարդների մոտ առկա է սոցիալական բարեկեցության ցածր մակարդակ, ինչը ենթադրում է անբավարարվածություն սոցիալական շրջապատով, միջավայրով և սոցիալական պայմաններով: Շատ հաճախ հասարակությունում սեփական դերի և տեղի զգացման, համայնքային պատկանելիության զգացման բացակայությունը կարող է հանգեցնել տվյալ հասարակությունից հեռանալու մտադրությանը:

Սոցիալական բարեկեցության մոդելը կենտրոնանում է անհատների՝ սեփական հասարակական և սոցիալական կյանքի գնահատումների վրա: Սոցիալական բարեկեցությունը ենթադրում է անհատների գնահատականները՝ հասարակությունում սեփական դիրքին և գործունեությանն ուղղված: Սոցիալական բարեկեցության բազմակողմանի մոդելը՝ կազմված մի շարք չափումներից ցույց է տալիս, թե արդյոք որ դեպքերում է անհատը գործում «լավ» սոցիալական աշխարհում. սոցիալական ինտեգրացիա, սոցիալական ներդրում, սոցիալական ընդունում, սոցիալական իրացում և սոցիալական համատեղություն:

Կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս հասկանալ սուբյեկտիվ բարեկեցության, մասնավորապես վերջինիս առանձին բաղադրիչների դերը երիտասարդների Հայաստանից մեկնելու մտադրություններում: Սուբյեկտիվ բարեկեցությունը բազմաբաղադրիչ կառույց է, ինչի ուսումնասիրումն էլ հետազոտողներիս համար ճանապարհ է հարթում նորանոր մարտահրավերների ուսումնասիրման ու վերլուծության համար:

Գրականություն

1. **Колосов, К. А., Пучкова Г. В.** "Личные устремления и субъективное благополучие личности." *Вектор науки Тольяттинского государственного университета* 1 (2012), 141-146.
2. **Diener, Ed.** "Assessing subjective well-being: Progress and opportunities." *Social indicators research* 31.2 (1994): 103-157.
3. **Diener, Ed.** "Subjective well-being: The science of happiness and a proposal for a national index." *American psychologist*55.1 (2000): 34.
4. **Diener, Ed, Richard E. Lucas**, and Christie Napa Scollon. "Beyond the hedonic treadmill: revising the adaptation theory of well-being." *American psychologist* 61.4 (2006): 305.
5. **Huppert, Felicia A., and Joyce E. Whittington.** "Evidence for the independence of positive and negative well-being: Implications for quality of life assessment." *British journal of health psychology* 8.1 (2003): 107-122.
6. **Huppert, Felicia A.** "Challenges in Defining and Measuring Well-Being and Their Implications for Policy." *Future Directions in Well-Being*. Springer, Cham, 2017. 163-167.
7. **Lamers, Sanne, et al.** "Evaluating the psychometric properties of the mental health continuum-short form (MHC-SF)." *Journal of clinical psychology* 67.1 (2011): 99-110.
8. **Ryff, Carol D.** "Happiness is everything, or is it? Explorations on the meaning of psychological well-being." *Journal of personality and social psychology* 57.6 (1989): 1069.

ОСОБЕННОСТИ СУБЪЕКТИВНОГО БЛАГОПОЛУЧИЯ В НАМЕРЕНИИ МОЛОДЫХ ЛЮДЕЙ ЭМИГРИРОВАТЬ

Мкртчян А. А.(ЕГУ, Ереван, РА)

В статье рассматривается роль отдельных компонентов субъективного благополучия и намерение молодежи эмигрировать, в частности, анализ эмоциональных, социальных и психологических характеристик благополучия в соответствии с намерениями молодых людей, проживающих в Ереване, покинуть Армению. Всестороннее исследование субъективного благополучия позволяет нам понять мотивы поведенческих проявлений человека. Результаты исследования показывают, что молодые люди, намеревающиеся покинуть Армению, имеют более низкую степень социального благополучия (социальная интеграция, прием и социальная реализация), чем те, у кого нет такого намерения. Результаты исследования являются основой для разработки стратегий предотвращения проблемы.

Ключевые слова: *субъективное, психологическое, социальное, благополучие, эвдемония, миграция, намерение.*

PECULIARITIES OF SUBJECTIVE WELL-BEING IN THE INTENTION OF YOUNG PEOPLE TO MIGRATE

Mkrtchyan A. A. (YSU, Yerevan, RA)

The article examines the role of separate components of subjective well-being and the intentions of the young people to migrate, in particular the analysis of an emotional, social and psychological peculiarities of well-being among the young adults from Yerevan. A comprehensive study of subjective well-being enables us to understand the motives behind the behavioral manifestations of a person. The results of the survey show that young people intending to leave Armenia have a lower degree of social well-being (social integration, acceptance and social realization) than those who do not have such an intention. The results of the research are the basis for the development of strategies for the prevention of the problem.

Key words: *subjective, psychological, social, well-being, eudaimonia, migration, intentions.*